նից 'ի ձեռն երկուց արանց։ Որոց հասեալ յԵրուսաղէմ սիրով ընկալեալ եղեն 'ի Պատրիարքէն եւ 'ի միաբանաց։ և սիրով ունկնդիր եղեն բանից ազգին։ այլ և խոստացան կատարել զբովանդակն կանոնական բանից հետ զհետէ։ Նոյն ժամայն սահմանեցին արկղ, ուր ունէր հաւաքիլ ամենայն արդիւնք վանաց, և զբանալի նորին յանձն արարին Մարտիրոս վարդապետի, և տումարակալ կարգեցին զԼուսարար Պետրոս եպիսկոպոսն։ տեսին եւս զհաշիւ Զուխաճեանն եւ կարգաւորեցին զգործ նորին ըստ կանոնին, եւ զայլս թողին գործադրել ըստ պիտոյից ժամանակին, եւ խոստացան վճարել զպարտս Աթոռոյն օգնութեամբ ազգին։ Եւ վասն այսր ամենայնի գրեցին գիր գոհունակութեան, ուր ձեռնարկեալ կնքեցին ամենեքեան, և առաքեցին 'ի Կոստանդինուպոլիս։ գրեցին նաեւ պատգամաւորքն բացատրելով զհանգամանս գործոյն և զԱթոռոյն։ Թէպէտեւ կարգաւորեցին զներքին կառավարութիւն Աթոռոյն այսպիսի եղանակաւ, սակայն տագնապ մեծ էր Պատրիարքին և խորհրդականաց յերեսաց դառնութեան ժամանակին։ զի հարկ անհրաժեշտ կայր 'ի վերայ հատուցանել զսահմանեալ տարեկան տուրս այլազգեաց, եւ արդիւնք ուխտաւորաց ժամանակին չէին բաւական հոգալ զպէտս Աթոռոյն, որոյ վասն առաքեաց զՆուիրակս յայլ եւ այլ գաւառս ըստ նախնի սովորութեան։ Եւ 'ի սմին ժամանակի վախճանեցաւ Կարապետ վարդապետ Նուիրակն Երուսաղէմի 'ի քաղաքն յԱժտերխան։ լուեալ զայս Յովակիմ Պատրիարքի գրեաց գիր խնդրանօք առ Կայսրուհին Ռուսաց Կատարինէ, շնորհել գիր հրամանի անկասկած շրջիլ Նուիրակաց Երուսաղէմի յամենայն քաղաքս և յաւանս յաշխարհին Ռուսաց, յորս ընակին յազգէն Հայոց եւ ժողովել զկամաւոր նուէրս նոցա 'ի նպաստ վանօրէից և վանականացն Հայոց եղելոց յԵրուսաղէմ։ Եւ պատրաստեաց Կայսրուհւոյն ընծայ պատուական Խաչ ոսկի զարդարեալ պատուական ակամբք, յորում էր և մասն ինչ 'ի Կենաց փայտէն։ այս Խաչ մնացեալ էր 'ի Գրիգոր Շըղթայակիր Պատրիարքէ։ Գրեաց նաեւ գիր օրհնութեան առ Եղիազար Հայ Իշխանազուն, լինիլ միջնորդ առ Կայսրուհին 'ի կատարումն խնդրոյ իւրոյ։ Զայսոսիկ գրեանս